



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲԵՐԿԱՆԿՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«15» 11 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 93

Ձեռնարկողը՝

*Չինաստանի Ժողովրդական
Հանրապետության դեսպանատուն*

Գործունեությունը՝

*Երևան քաղաքի Իսակովի պողոտա 17/4 և 19
հասցեներում նախատեսվող Չինաստանի Ժողովրդական
Հանրապետության դեսպանատան կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԶՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 93

«15» 11 2018թ.

Երևան քաղաքի Խսակովի պողոտա 17/4 և 19 հասցեներում նախատեսվող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատան կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

Պատվիրատու՝	Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատուն
Նախագծող՝	Ա/Ձ Ա. Գալոյան
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ Նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի Երևան քաղաքի Խսակովի պողոտա 17/4 և 19 հասցեներում նախատեսվում է Չինաստանի դեսպանատան կառուցում:

Հողատարածքը ուղղանկյունաձև է, մակերեսը կազմում է 3.92 հա, կառուցապատման մակերեսը կազմում է 6998 քմ, մասնաշենքերը նախատեսվում է կառուցել 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներով:

Առաջին գոտի- ընդունելությունների և վիզաների մասնաշենք՝ միահարկ, հիմնական մուտքային մաս և անցակետ՝ միահարկ և ինժիներական ենթակառուցվածքները՝ նույնպես միահարկ:

Երկրորդ գոտի - նախատեսվում է կառուցել գրասենյակային մասնաշենք՝ երեք լիարժեք և մեկ նկուղային հարկ, դեսպանի նստավայր՝ մեկ հարկ:

Երրորդ գոտի- նախատեսված է բազմաբնակարան բնակելի շենք աշխատակիցների համար՝ չորս հարկ, պահեստ՝ մեկ հարկ և օժանդակ մուտք-անցակետ՝ մեկ հարկ:

- Շինությունների մակերեսները՝
- Գրասենյակային մասնաշենք և դեսպանի նստավայր – 3744.29 մ²
 - Վիզաների մասնաշենք և անցակետ – 569.68 մ²
 - Բազմաբնակարան բնակելի շենք – 2105.82 մ²
 - Ինժիներական ենթակառուցվածքների մասնաշենք – 231.06 մ²
 - Պահեստ – 321.33 մ²
 - Երկրորդ մուտք-անցակետ – 25.92 մ²
 - Հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ
 - Հողատարածքի մակերես՝ 39201.53 մ²
 - Կառուցապատման մակերես՝ 6998.1 մ²
 - Կանաչապատման մակերես՝ 22919.65 մ²



-Ասֆալտապատ ճանապարհի մակերես՝ 4872.3 մ²

-Ցանկապատի երկարություն՝ 681մ

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ներկա իրավիճակում իրականացված են հիմնական հողային և բետոնային աշխատանքները:

Ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին միացված է համայնքային կոյուղատարին:

Մասնաշենքերի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել 3 հատ Ariston R602 մակնիշի 194 կվտ դրվածքային հզորությամբ կաթսաներով:

Գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել Ծ. Իսակովի պողոտայի միջին ճնշման d=219 մմ տրամագծի գազատարից՝ գազատարի սեփականատիրոջ թույլտվությամբ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- շինարարական հրապարակների ցանկապատում՝ անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- շինանյութերի, ավելցուկ գրունտի և շինարարական աղբի տեղափոխում՝ ծածկված մեքենաներով,
- շինհրապարակի պարբերաբար ջրում,
- սորուն նյութերի (ավազ, ցեմենտ) պահեստավորում փակ տարածքներում, կամ թաղանթներով ծածկում:


Նախնական գնահատման հայտում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը;
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում;
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում;
- չոր եղանակներին իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում՝ ջրցանման միջոցով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000): Այն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, որի ընթացքում ազդեցությունները թույլատրելի նորմերի սահմաններում են և կրում են ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները և ազդակիր համայնքը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Իսակովի պողոտա 17/4 և 19 հասցեներում նախատեսվող Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատան կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ



[Handwritten signature]

[Handwritten signature]

Ա. Դոնոյան

Ա. Մինասյան